ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏԸ
SPECIAL TOPIC: THE HEART

Հունարեն *kardia* տերմինը կիրառվում է Սեպտուագինտայում և ՆԿ-ում նկարագրելու եբրայերեն *lēb* (BDB 523, KB 513) տերմինը: Այն օգտագործվում է մի քանի կերպ (տես՝ Bauer, Arndt, Gingrich, *A Greek-English Lexicon, /Հունարեն-անգլերեն բառարան/* pp.403-404):

1. Ֆիզիկական կյանքի կենտրոնը՝ անձի փոխաբերական իմաստը (տես՝ Գործք14:17, 2 Կորնթ. 3:2-3, Հակ.5:5):
2. Հոգևոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բարքերը)
   ա. Աստված գիտի սիրտը (Ղուկ.16:15, Հռոմ.8:27, 1 Կորն.14:25, 1 Թեսաղ.2:4, Հայտ.2:23):
   բ. Մարդկանց հոգևոր կյանքի իմաստով (տես՝ Մատթ.15:18-19, 18:35, Հռոմ.6:17, 1 Տիմ.1:5, 2 Տիմ.2:22, 1 Պետ.1:22):
3. Մտավոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բանականությունը. տես՝ Մատթ.13:15, 24:48, Գործք 7:23, 16:14, 28:27, Հռոմ.1:21, 10:6, 16:18, 2 Կորն.4:6, Եփես. 1:18, 4:18, Հակ.1:26, 2 Պետ. 1:19, Հայտն.18:7, սիրտը և միտքը ներկայացված որպես հոմանիշներ՝ 2 Կորնթ.3:14-15 և Փիլ. 4:7):
4. Կամային հատկանիշների կենտրոնը (այսինքն՝ կամքը, տես՝ Գործք 5:4, 11:23, 1 Կորնթ. 4:5, 7:37, 2 Կորնթ.9:7)
5. Զգացմունքների կենտրոնը (տես՝ Մատթ.5:28, Գործք 2:26,37, 7:54, 21:13, Հռոմ.1:24, 2 Կորնթ.2:4, 7:3, Եփես.6:22, Փիլ.1:7)
6. Հոգու գործունեության համար եզակի տեղը (տես՝ Հռոմ. 5:5, 2 Կորնթ. 1:22, Գաղ. 4:6 [այսինքն՝ Քրիստոսը մեր սրտերում, Եփես. 3:17])
7. Սիրտը հանդիսանում է ամբողջական անձի փոխաբերությունը (տես՝ Մատթ. 22:37, մեջբերված՝ 2 Օր. 6:5): Մտքերը, նպատակները և գործողությունները, որոնք վերագրվում են սրտին, լիովին հայտնում են անձի անհատականությունը: ՀԿ-ում կան այս տերմինի կիրառության մի քանի զարմանալի օրինակներ՝
   ա. Ծննդ. 6:6, 8:21, «Աստված տրտմեց Իր սրտում» նաև ստուգեք Ովսեա 11:8-9
   բ. 2 Օր. 4:29, 6:5, «քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով»
   գ. 2 Օր. 10:16, «անթլփատ սիրտ» և Հռոմ. 2:29
   դ. Եզեկ. 18:31-32, «մի նոր սիրտ»
   ե. Եզեկ. 36:26, «մի նոր սիրտ» հակադրված՝ «քարե սրտի» հետ (տես՝ Եզեկ. 11:19, Զաք. 7:12):